

9.

Հայաստանի սահմանները որպես ազգային անվտանգության գործոն

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ*

Պետական սահմանների այն ըմբռնումը, որն այսօր տարածված է ինչպես գիտական գրականություն, այնպես էլ առօրեական գիտակցության մեջ, ձևավորվել է Եվրոպայում ազգային պետությունների կազմավորման դարաշրջանում: Սահմաններն այնուհետև վերածվում են ազգային «տիեզերքի» տարածքի երկրաքաղաքական ձևակերպման, յուրատեսակ մի թաղանթի, որում ներառվում է ազգ-պետությունը: Սահմանը, գրում է Ս. Կոհենը (Cohen, Saul B.), «չատ ավելին է, քան ինքնիշխանության պարզ սահմանագատումը: Այն դառնում է որոշակի (ինչոր) մի խորհրդանիշ, որը կողմնորոշում է լանդշաֆտը (երկրապատկերը) դեպի ներս, ազգի միջուկը, և այսպիսով հզոր, կենտրոնացնող տարր է»: Հետևապես, սահմանը հանդիսանում է ոչ թե որպես ժամանակի որոշակի հատվածում քաղաքական-աշխարհագրական իրողությունների մեքենայական (մեխանիկական) արձանագիր, այլ առաջին հերթին արտացոլում է ազգի շինարարության գործընթացը և ազգային ինքնագիտակցությունը կերտող գլխավոր տարրերից է:

Երկրաքաղաքական հարցերով ամենահայտնի հեղինակություններն են Ե. Սփիքմենը, հիմնավորում է, որ սահմաններն այն ուժային գծերն են, որտեղ չեզոքանում է պետությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ լարվածությունը: Ըստ նրա, միջազգային քաղաքականության տեսանկյունից սահմանը համապատասխան ուժային փոխհարաբերությունների արտահայտություն է որպես գծի, որտեղ հավասարակշռվում է բախումային լարվածությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ պետու-

* ԴՐՈՇԱԿ, Ա.ՊՐԻԼ, 2002, թիվ 2:

Թյունները փոխ-գործում են առանձին պետությունների, պետությունների խմբերի, պետությունների միավորումների հետ՝ մշտապես ենթակա լինելով ուժերի համաշխարհային հաշվեկշռի տրամաբանությունը: Հենց ուժերի հաշվեկշիռն էլ «փորձնականորեն» սահմանում է այս կամ այն սահմանի կենսունակությունը՝ ստիպելով պետություններին պայքարել սահմանների պահպանման կամ վերանայման համար:

Հայաստանի պատմական ճակատագրի առումով ուշագրավ է Օտտո Մաուլի տեսակետը.

«Սահմանը, որպես գիծ, - գրում է նա,- իրականում ճշմարիտ սահման չէ, այլ շատ կամ քիչ պատահականորեն ձևաք բերված փոխգիջում՝ հաճախ բռնություն գործողության հետևանքով: Սահմանը, այսպիսով, քաղաքական-ուժային իրադրությունների միջև սոսկական դադար է: Համաձայնությունները, որոնք երաշխավորում են սահմանները, հիմնված են այն մեծ մոլորություն վրա, թե կարելի է իբրև թե սահմանափակել ազգի աճը»:

Սակայն ինչպիսի՛ բանավեճ էլ լինի սահմանների բնութագրման հարցում, անկախ բարեկամական, չեզոք թե թշնամական պետությունների բաժանարար գիծ լինելուց, այդպիսիք, ըստ էության, քաղաքական-ուժային անհավասարակալի նշանակություն սահմաններ են: Ավելին, սահմանի գլխավոր գործառույթն ուղղված է քաղաքական և ուժային խնդիրների իրականացմանը: Ըստ Հոլդիչի (Holdich, Th. H.), սահմանակցող երկրների միջև սահմանները «պաշտպանական բաժանարար գծեր են»: Եվ դրանք համապատասխան գրականության մեջ բաժանվում են «բնական» և «արհեստական»:

«Բնական» սահմաններ ասելով սովորաբար հասկացվում են տեղանքի ֆիզիկական բնութագրերը, որոնք քաղաքական սահմանների հիմք կարող են դառնալ: «Բնական» սահմանները գերադասելի են, քանզի ունեն շատ առավելություններ. նրանք հեշտությամբ են որոշվում և բաժանման ժամանակ դժվարություններ չեն հարուցում, էժան են, կայուն և այլն: Սովորաբար այդպիսի սահմաններ են դառնում գետերը, լճերը, լեռնաշղթաները, անապատները և այլն: «Արհեստական» սահմանները քիչ են ապահով: Այդպիսիք սահմանագծման (դեմարկացիա) համար մեծ միջոցներ են պահանջում, դժվար է պահպանությունը: Սակայն

նույնիսկ արհեստական սահմանները հաստատվում են տեղանքի տեղադրություն և առավելագույն հաշվառումով: Ոչ մի դիվանագետ, գրում է նույն Հոդվածը, չի համաձայնի ոչ մի «արհեստական» սահմանի գոյություն հետ, մինչև չհամոզվի «բնական» սահմանները ստեղծելու անհնարինություն մեջ: Պետությունները ձգտում են իրենց սահմանները հասցնել բնական «սահմանագծերի»:

Ասվածի լույսի ներքո անդրադառնանք ՀՀ և ԼՂՀ սահմանների խնդրին:

Նախ՝ մի փոքր տեղեկանք:

Հայաստանի Հանրապետությունը հաջորդն ու իրավական ժառանգորդն է ՀԽՍՀ-ի, որն իր կազմի մեջ էր ընդգրկում Հայաստանի առաջին Հանրապետության տարածքների մի մասը միայն կամ, որ նույնն է, Ռուսական Անդրկովկասի նախկին Երևանի նահանգը (առանց Նախիջևանի և Սուրմալու գավառի), Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի, Զանգեզուրի և Ղազախի գավառների մեծ մասերը, Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի մեծ մասը և Կարսի նահանգի Հյուսիս-արևելյան փոքր հատվածը: Աշխարհագրորեն ՀՀ-ն ընկած է Հյուսիսային լայնության 38,5 աստիճանից մինչև 41,18 աստիճանը և արևելյան երկայնության 42,25 աստիճանից 46,47 աստիճանի միջև գտնվող տարածություն մեջ: ՀՀ-ի երկարությունը Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք 360 կմ. է, իսկ ամենալայն մասը կազմում է 200 կմ.: Ուղիղ գծով ՀՀ-ն Կասպից ծովից բաժանում է 190 կմ., Սև ծովից՝ 160 կմ.: Գտնվում է Հայկական լեռնաշխարհի առավել լեռնային մասում: Մակերևույթի միջին բարձրությունը 1830 մետր է, իսկ ցածրագիր վայրերում՝ 379 մետր: Ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ԼՂՀ-ն տեղավորված են Արևելյան Հայաստանի պատմական տարածքներում:

ՀՀ սահմանները գծվել են ռուս-թուրքական դաշնագրով (Մոսկվա, 1921), առանց հայ ժողովրդի մասնակցություն, և սա կարելի է համարել (կայսերապաշտական բաժանման իմաստով) Մոլոտով-Ռիբենտրոպ համաձայնագրի նախատիպը: Ըստ այդմ, ՀՀ-ն արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հարավ-արևմուտքից՝ Նախիջևանի ինքնավարությունը (Ադրբեջանական խնամակալություն), հարավից՝ Իրանին, Հյուսիսից՝ Վրաստանին,

իսկ արևելքից՝ Ադրբեջանին:

Եթե քաղաքական իմաստով ՀՀ-ն ինքնուրույն միավոր է, ԼՂՀ-ն ներակա (իմպլիցիտ) իմաստով համարվում է վիճելի տարածք, ԽՍՀՄ օրենսդրությունը՝ Ադրբեջանից իրավական ճանապարհով առանձնացած նորանկախ պետություն, իսկ երկրաքաղաքական տեսանկյունից՝ որպես անջրպետ (բուֆերային) պետություն, ապա ռազմավարական առումով երկու հայկական պետական կազմավորումները մեկ ամբողջություն են: Ուստի և նրանց սահմանային բնագիծը Ադրբեջանի հետ Օմարի լեռնանցքից մինչև Հորադիզ հանդես է գալիս որպես միասնական ռազմավարական սահման (ՀՀ և ԼՂՀ ամբողջությունը հետագա շարադրանքում մենք կանվանենք կարճ՝ Հայաստան):

Անդրադառնալով Հայաստանի սահմաններին հերթականությունով՝ բնութագրելով (բացառությամբ Նախիջևանի հատվածը) որպես բնական սահմաններ: Հայ-թուրքական սահմանն ունի երեք բնորոշիչ.

ա) քաղաքական առումով որպես երկու պետությունների միջև սահմաններ, որոնք ՀՀ անկախության ձեռքբերումից հետո չեն վերահաստատել վերջիններս (Կարսի դաշնագիրը),

բ) երկրաքաղաքական առումով՝ Ռուսաստանի ազդեցության ոլորտի և Եվրասիայի (Heartland) ռազմավարական սահմանագիծ,

գ) միություն առումով՝ այնքանով, որքանով ԱՊՀ-ն կարող է հանդես գալ որպես այդպիսին: Այս սահմանը մշակութային առումով հանդես է գալիս թուրքական քաղաքակրթական «կիսալուսինը» հատող ճակատային գիծ: Այս իմաստով թերևս տվյալ հատվածը կարելի է դիտել որպես frontier (և ոչ՝ boundary)¹:

Նախիջևանի սահմանը (Ֆիզիկական տեղադրվածությունը) խախտում է Արարատյան դաշտի արևելյան մասի ամբողջականությունը, իսկ Նախիջևան-թուրքիա սահմանը (Նախիջևանը թուրքիայի պաշտպանական համակարգում ընդգրկելու իրողության պարագայում) ռազմավարական իմաստով լուրջ խնդիրներ է դնում Հայ-ռուսական համատեղ պաշտպանական համակարգի առջև: Թուրքիայի ազդեցության թուլացման միջոց կարող է ծառայել միջազգային օրենսդրությունը՝ Նախիջևանի խնամակալության մասով, որի երաշխավորներն են և՛ թուրքիան, և՛ Ռուսաստանը:

¹Frontier – սահմանային գոտի

Հայաստան-Իրան սահմանը, բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, հիմնականում Հարավային Ադրբեջանի խնդրի առնչությամբ, պետք է դիտել որպես *boundary*¹¹ (և ոչ՝ *frontier*): Ռուսաստան-Հայաստան-Իրան գործընկերությունը մեծ կարողականություն ունի Նախիջևանի վրա ռազմավարական վերահսկողություն հաստատելու առումով:

դ) Հայ-վրացական սահմանը քիչ լարվածություն պայմանավորող հատված է, հիմնականում ոչ թե բնական սահմանագծերի առկայություն պատճառով, այլ Վրաստանի ներքին (էթնիկական) թուլություն և Ռուսաստանի հետ ունեցած խնդիրների (հակառուսական կողմնորոշում) հաշվառումով: Թերևս Հայ-վրացական սահմանը որոշակի պայմանների փոփոխություն դեպքում հանդես բերի «արհեստական» գործառույթ:

ե) Հայ-ադրբեջանական սահմանագիծը, երկրաքաղաքական ու ռազմավարական իմաստով, հանդես է գալիս որպես *frontier*, ճակատային գոտի և այլն, սակայն ոչ որպես գիծ: Արցախյան ազատամարտի հետևանքով Հայկական բանակի զբաղեցրած պաշտպանական բնագծերը ներառել են Փոքր Կովկասի լեռնազանգվածները՝ ռազմավարական հսկայական առավելություն հաղորդելով Հայկական կողմին: Ադրբեջանի համար մահացու սպառնալիք է Եվլախի (հաղորդակցություն հիմնական ուղիների հանգույցը) ուղղությամբ Հայկական առաջավոր զինուժի տեղաբաշխվածությունը:

Այսպիսով՝ Հայաստանը հետխորհրդային տարիներին երկրաքաղաքական նպաստավոր իրադրություն և Հայ ժողովրդի դրսևորած ռազմաքաղաքական կամքի շնորհիվ որոշակի ռազմավարական հաջողությունների է հասել՝ հուսալիորեն իրարից հեռացնելով թուրքական քաղաքակրթության ճակատային հատվածները՝ երկրաչափական սեղանի տեսք հաղորդելով Հայկական «սեպին»:

Այս նյութական իրադրության էական փոփոխությունը միջազգային հարաբերությունների արմատական տեղաշարժեր է պահանջում (Հարավային Կովկասի երկրաքաղաքական տարածաշրջանում), որը առաջիկա տարիներին քիչ հավանական է:

Հայաստանին անհրաժեշտ է դիվանագիտական արվեստի դրսևորում և բազմամակարդակ (էջեկոնացված), Արևելքում, խոր պաշտպանություն կազմակերպում:

¹¹ Boundary – սահմանային գիծ: